**Երկրորդ ընթերցում**
**Լրամշակված նախագիծ**

**Կ-427-14.11.2022-ՏԵ-011**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի 15-րդ մասի «արտահանման» բառից հետո լրացնել «,բացառությամբ ԵԱՏՄ երկրներ,» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 20-րդ հոդվածի 15.1-րդ մասի «արտահանման» բառից հետո լրացնել «,բացառությամբ ԵԱՏՄ երկրներ,» բառերը:

***Հոդված 3.*** Օրենքի 20-րդ հոդվածի 15.2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«15.2. ԱՏԳ ԱԱ 7201, 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308 ծածկագրերին (իսկ 7302 ծածկագրից՝ ռելսերի, 7325 եւ 7326 ծածկագրերից՝ սեւ մետաղից սալիկների եւ աղացագնդերի, 7322 ծածկագրերից՝ օգտագործված թուջե ռադիատորների) դասվող սեւ մետաղի թափոնների եւ ջարդոնի, սեւ մետաղից պատրաստված խողովակների եւ դրանց կցամասերի, սեւ մետաղական կոնստրուկցիաների յուրաքանչյուր տոննայի արտահանման համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ (սույն կետով նախատեսված՝ պետական տուրքի վճարման պարտավորությունը չի բազային
տարածվում «Ժամանակավոր ներմուծում» եւ «Վերամշակում մաքսային տուրքի
տարածքում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված եւ հետագայում 60-
վերաարտահանվող, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում ապատիկի

արտադրված՝ վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող (բացառությամբ չափով ԱՏԳ ԱԱ 7201, 7204) ապրանքների վրա):»:

***Հոդված 4.*** Օրենքի 20-րդ հոդվածի 15.3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«15.3. ԱՏԳ ԱԱ 7404 00, 7503 00, 7602 00, 7802 00 000 0, 7902 00 000 0, 8002 00 000 0, 8101 97 000 0, 8102 97 000 0, 8103 30 000 0, 8104 20 000 0, 8105 30 000 0, 8106, 8108 30 000 0, 8109 31 000 0, 8109 39 000 0, 8110 20 000 0, 8111 00 190 0, 8112 13 000 0, 8112 22 000 0, 8112 31 000 0, 8112 41 000 1, 8112 52 000 0, 8112 61 000 0, 8112 92 210, 8113 00 400 0 ծածկագրերին դասվող գունավոր մետաղի թափոնների եւ ջարդոնի, (բացառությամբ «ժամանակավոր ներմուծում» եւ «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված եւ հետագայում վերաարտահանվող վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների) յուրաքանչյուր տոննայի արտահանման, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ, համար:»: | բազային տուրքի 100-ապատիկի չափով

***Հոդված 5.***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքը տարածվում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո լիցենզիա (հավաստագիր, թույլտվություն) ստանալու համար ներկայացված հայտերի վրա:

*~~Առաջին~~Երկրորդ ընթերցում*
*Լրամշակված նախագիծ*

*Կ-427-14.11.2022-ՏԾ-011/1*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.**

~~Օրենքի~~ «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի 15-րդ մասի «արտահանման» բառից հետո լրացնել «,բացառությամբ ԵԱՏՄ երկրներ,» բառերը:

**Հոդված 2.**

Օրենքի 20-րդ հոդվածի 15.1-րդ մասի «արտահանման» բառից հետո լրացնել «,բացառությամբ ԵԱՏՄ երկրներ,» բառերը:

***Հոդված 3.***

Օրենքի 20-րդ հոդվածի 15.2-րդ ~~մասի տեքստը~~մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«15.2. ԱՏԳ ԱԱ 7201, 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308 ծածկագրերին (իսկ 7302 ծածկագրից՝ ռելսերի, 7325 եւ 7326 ծածկագրերից՝ սեւ մետաղից սալիկների եւ աղացագնդերի, 7322 ծածկագրերից՝ օգտագործված թուջե ռադիատորների) դասվող սեւ մետաղի թափոնների եւ ջարդոնի, սեւ մետաղից պատրաստված խողովակների եւ դրանց կցամասերի, սեւ մետաղական կոնստրուկցիաների յուրաքանչյուր տոննայի արտահանման համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ (սույն կետով նախատեսված՝ պետական տուրքի վճարման պարտավորությունը չի բազային

տարածվում «Ժամանակավոր ներմուծում» եւ «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված եւ հետագայում վերաարտահանվող, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 7201, 7204) ապրանքների վրա):»: | տուրքի 60-ապատիկի չափով

***Հոդված 4.***

Օրենքի 20-րդ հոդվածի 15.3-րդ ~~մասի տեքստը~~մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«15.3. ԱՏԳ ԱԱ 7404 00, 7503 00, 7602 00, 7802 00 000 0, 7902 00 000 0, 8002 00 000 0, 8101 97 000 0, 8102 97 000 0, 8103 30 000 0, 8104 20 000 0, 8105 30 000 0, 8106, 8108 30 000 0, 8109 31 000 0, 8109 39 000 0, 8110 20 000 0, 8111 00 190 0, 8112 13 000 0, 8112 22 000 0, 8112 31 000 0, 8112 41 000 1, 8112 52 000 0, 8112 61 000 0, 8112 92 210, 8113 00 400 0 ծածկագրերին դասվող գունավոր մետաղի թափոնների եւ ջարդոնի, (բացառությամբ «Ժամանակավոր ներմուծում» եւ «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված եւ հետագայում վերաարտահանվող վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների) յուրաքանչյուր տոննայի արտահանման, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ, համար:»: | բազային տուրքի 100-ապատիկի չափով

~~ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ~~

***Հոդված 5.*** ~~Օրենքի ուժի մեջ մտնելը~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող ~~10-րդ օրվանից~~տասներորդ օրը:

2. Սույն օրենքը տարածվում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո լիցենզիա (հավաստագիր, թույլտվություն) ստանալու համար ներկայացված հայտերի վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-427-14.11.2022-ՏԵ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | ՀՀ կառավարություն | Նախագծի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ հոդվածներ | Նախագծի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ հոդվածներում հղում է կատարված «Օրենքին»: Նախագծում հղումների հստակությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք՝ հիշատակել այն նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը, որում նախատեսվում է լրացումներ եւ փոփոխություններ կատարել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասը: | Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածում նշվել է փոփոխվող օրենքի ամբողջական անվանումը և լրացվել են (այսուհետ՝ Օրենք) բառերը: | Ընդունվել է: |
| 2. | ՀՀ կառավարություն | Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներ | Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներում «մասի տեքստը» բառերը փոխարինել «մասը» բառով: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | փոփոխություն: | |
| 3. | ՀՀ կառավարություն | ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ | Նախագծի 4-րդ հոդվածից հետո նշված «ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ» ձևակերպումն առաջարկում ենք հանել: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| 4. | ՀՀ կառավարություն | Նախագծի 5-րդ հոդված | Նախագծի 5-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված կանոնը, այն է՝ «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| 5. | ՀՀ կառավարություն | Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մաս | Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասում «10-րդ օրվանից» բառերը փոխարինել «տասներորդ օրը» բառերով: | Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |